ԱՇՈՒՂԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

1. — ԱԴԱՄԱՅ ՈՐԴԻ

Ադամայ որդի՛, քեզ մին խրատ տամ,
Ականջ արա. լուս աչկդ մի պահել կուր.
Կուր մի՛ պահել քեզի աղքատի դիմաց,
Քո ապրանքէն նրան էլ բաժին տուր։

Տուր բաժին աղքատաց, Աստոյ ճամբին կաց,
Գնա դու եկեղեցի, ղղջնա՛, քո մէղկն լաց.
Ամենայն ժամ դու քո աղօթքումն կաց,
Համիշայ սիրտդ խստակ պահի, քո մեղքն լաց։

Սիրտդ խստակ պահի, ընկերոջ համար ջան տուր, [հոգի տուր.
Թէկուզ հայ ըլնի, թէկուզ թուրք, քո կեանքը [մատաղ տուր.
Ղուլ Յովհաննէս ոչ մէկին փասա թթու, ջան [ասա, ջան տուր,
Համիշա սիրէ բոլորին, ջան ասա, քո կեանքը [սատաղ տուր։

2. — ՀՈԳԻՈՅԴ ՃԱՆԱՊԱՐՀԸ

Հոգւոյդ ճանապարհն յիստակիր,
Աղօթք արա՛ տեսնես լոյս.
Կեանք ունես, տո՛ւր աղքատաց,
Մին օր կելնի ձեռնէդ դուս։

Ունայն ա մալն այն, փուչ ա մեր կեանքն,
Ճշմարիտ ա այն, որ կայ վախճանքն.
Թէ իմանաք էն ա մեր աշխատանքն,
Սէր ու սէրլու, հաւատ ու լոյս։

Հինգ օր էս աշխարհումն դու մին ղոնաղ աս,
Ճար արա քո հոգուն, քանի որ սաղ աս.
Ի՛նչ ցանես, քո ձեռնովն էն կու քաղես,
Թէ փուշ ա, թէ ծաղիկ բերես լուս։

Արի՛, էյ ադամայ որդի, դու ինձ լսի,
Հալալ արա, հալալ գործի, ջանով սիրի.
Ղուլ Յովհաննէս էս աշխարհում բարի գործի,
Չարէն ռադ էղիր, թէ եար, թէ սաղ սրտով սիրի։

3. — ԲԱՐԻ ՆՇԱՆՔ

Ո՛վ որ էս աշխարհին միտքն բարի ա,
Հալբաթ չի գտանվի չար նրա համար.
Իւր գործքովն իւր հոգին կը լուսաւորի,
Փայլի դատաստանին ճառ նրա համար։

Հալալն մի՛ թողնի, վազ տալ հարամին,
Հազար փաս տալով կտանի քամին.
Թէկուզ հազար լվաս սեւն չի սպիտակի,
Էրկաթն էրկաթ ա, ինչքան ծէծէս զուր ա ոսկի [համար։

Ղուլ Յովհաննէս մտածիր դու քո աչալն,
Կամ քո վերջին օրն, կամ հոգուդ տալն.
Շատ մարդիկ կիտեցին դոլվաթ ու մալն,
Ախրն բաֆայ չար ու զառ նրա համար։

4. — ԱՐԻ՛, ԱՅ ՈՐԴԻ

Արի՛, ա՛յ փուչ Ադամայ որդի,
Շատ մի՛ խնդալ չարի վերայ.
Ի՞նչ աս կխտում մանգ ու մառանգ,
Էս ունայն աշխարհիս վերայ։

Աշխարհս այլ և այլ ա, իմացիր,
Գնա Աստծոյ ճամբումն կացիր.
Մին ողորմութիւն ստացիր,
Բարի արա քո ճամբի վերայ։

Ճանապարհդ պահիր մաքուր,
Այլոց վերայ մի՛ ասել զուր.
Չար սատանին նալաթ տուր,
Կացիր բարի բանի վերայ։

Մի՛ ժամանակ տալ սատանին,
Որ կ'հակառակի քո բանին.
Կ'բնակուի մէջ մարանին,
Խոր սև ամպն սարի վերայ։

Ղուլ Յովհաննէս սիրտդ բաց,
Հոգուդ մեղքն չուտով մաքրի.
Բարութիւն արա ամէն մարդի,
Կանգնիր քո էղբարի վերայ։

ՂՈՒԼ ՅՈՎՀԱՆՆԷՍ

digitised by A.R.A.R.@